Պարույր Սևակ

Սարսափում եմ ես լոկ հիմա

Դու ասում ես, թե սառել եմ,
Բոլո՜ր-բոլո՜ր կրակներըս ես վառել եմ
Ու հիմա էլ... մթան մեջ եմ ես խարխափում:
Իսկ ես կասեմ. ես քայլել եմ,
Երբ որ մութ էր՝ ես փայլել եմ,
Բայց չեմ խաբել ես ոչ ոքի ու չեմ խաբում:
Ես չեմ խաբել ո՛չ մի խոսքով,
Ո՛չ մի երգով կամ ակնարկով.
Կա՛մ սիրել եմ, կա՛մ ատել եմ, բայց չեմ խաբել,
Երկու հարկով բարձր եմ ապրել,
Ցած եմ իջել երկու հարկով,
Իջել-ելել, սակայն երբեք չեմ խարխափել:
Թե երբևէ խարխափել եմ՝
Խարխափում եմ ես լոկ հիմա,
Թե երբևէ սարսափել եմ՝
Սարսափում եմ ես լոկ հիմա,
Միայն հիմա՛, երբ չգիտեմ՝
Դու եղե՞լ ես, կա՞ս, թե չկաս,
Միայն հիմա՛, երբ զգո՛ւմ եմ,
Հասկանո՛ւմ եմ ու սարսափո՛ւմ,
Թե առանց քեզ, իմ կորա՛ծըս,

Այս աշխարհի ինչն է պակաս...

25.X.1955թ.
Մոսկվա